Արձանագրություն թիվ 2
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող
ՀՀ Շիրակի մարզային հանձնաժողովի 2015 թվականի
մայիսի 19-ի նիստի

Նիստը վարում էր - Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ Հ. Արշակյանը:

Նիստին մասնակցում էին՝

Կ. Աբրահամյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳ մարմինների հարցերով վարչության պետ, հանձնաժողովի անդամ.

Ս. Մինասյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ, հանձնաժողովի անդամ.

Լ. Գինոսյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ.

Ա. Խաչատրյան - Գյումրու <<Արաքս Կենտրոն>> ԲՀԿ նախագահ, հանձնաժողովի անդամ,

Ռ.Ռաշոյան - <<Գյումրու հաշմանդամների ասոցիացիա>> ՀԿ նախագահ, հանձնաժողովի անդամ.

Ա. Գյունաշյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար:

Նիստին մասնակցում էին հրավիրվածներ՝

Գ. Տարասյան - <<Հայկական Կարիտաս>> ԲՀԿ գործադիր տնօրեն.

Ս.Գրիգորյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ.

Օրակարգ – Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանությանը, նրանց իրավունքների ապահովմանն ու սոցիալական ներառմանն ուղղված՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից 2016 թվականի համար նախատեսված միջոցառումների

վերաբերյալ տեղեկատվությունը՝ տարեկան ծրագրում ներառելու համար.

/Հաղորդում՝ Ա.Գյունաշյան - հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով մարզային հանձնաժողովի քարտուղար/:

Լսեցին - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Ա և ՍԱ վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար Ա.Գյունաշյանի հաղորդումը՝ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանությանը, նրանց իրավունքների ապահովմանն ու սոցիալական ներառմանն ուղղված՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից 2016 թվականի համար նախատեսված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ տարեկան ծրագրում ներառելու համար.

Ելույթ ունեցան՝ Ս Մինասյանը, Ռ.Ռաշոյանը, Լ. Գինոսյանը, Ս.Գրիգորյանը: Նիստում քննարկումներն ամփոփեց հանձնաժողովի նախագահ, ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ Հ. Արշակյանը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հավանություն տալ ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից 2016 թվականի համար նախատեսված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությանը՝ տարեկան ծրագրում ներառելու համար:

Որոշումն ընդունվեց միաձայն:

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գյունաշյան